

կոծութեան ենթարկուած՝ շատ անհաւասար, վրդովեալ եւ լի յուսախաբութիւններով, Ահարոնեանի դրականութեան կ'ընծայէ իրական եւ ապրուած նկարագիր մը, որով եւ հարադատ անոր հոգւոյն։

Ան դրական ասպարէզին մէջ իր մուտքը կ'ընէ 1896ի ջարդերու աղէտներէն ներ- շնչուած։ Իդէիլը կը դառնայ ապաստանա- րան մը թրքահայ հարստահարեալներու եւ զաղթականներու՝ որոնք փախչելով թուրք բանակին խժոժութիւններէն ազատ արեւ կը փնտռեն։ Ահարոնեան երիտասարդ ու զղայուն՝ կը յուզուի այդ չէպէտէն ու կու տայ Պուտ-ըմ-կաթ, Փշուր-ըմ-խաց, Բաշօն եւ Ֆալաֆ վուրդունի պատկերները եւ կը յուզէ ամբողջ հայութիւնը։ Իր համ- բաւը կը պարտի անոնց։ Ահարոնեան կը դառնայ փնտռուած դրագէտը եւ Քրիստա- փոր Միքայէլեան՝ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն մին՝ կը հետապնդէ զին- քը, Զուլիցերիոյ մէջ, — ուր Ահարոնեան անցած էր իր դրականութեան հաստատուն հիմերը դնելու պատմա-փիլիսոփայական դիտութիւններով — խնդրելու իրմէ որ շարունակէ այդ շարքը՝ որ բոլոր հայու- թեան սրտին հետ այնքան մտերմօրէն կը խօսէր։ Այսպէս առաջ կու դայ Ազատու- քեան ֆանապարիքը, որ լոկ թշուառութեան նկարագրութիւններ ըլլալու տեղ՝ այս ան- դամ նաեւ ազատագրական շարժման մղիչ ոյժ մ'էր հայ երիտասարդութեան ձեռքը։ Այդ ողբի եւ դայրոյթի էջերուն հեղինակը Ղարիբն էր, որ տեսած ու ճանչցած աղէտի մանրամասնութիւնները, իր դրաւիչ պատ- կերներով կը կանգնէր յիշատակարանը հայ տառապող եւ աղատասէր հոգւոյն։ Խալը, Բքխմարը, զմայլելի էջեր պատմող եւ սրտերը թունդ հանող Ղարիբին, որ այլ- եւ մի աղօթիք, Զաւօն, Աշուղը, Արիւնտ, եւս տիրապետօրէն մտած էր հայ դրակա- նութեան անդաստանը եւ կ'իշխէր մտքերու եւ սրտերու վրայ իր դեռ շատ երիտասարդ հասակին մէջ։ Բաֆֆի այսքան յուզած էր հոգիները, մղած էր պայքարի՝ բայց լա-

ցուցած էր. վասն զի անոր մէջ զղայու- թիւնը այնքան խոր էր որքան Ահարոնեա- նի մէջ. սա Արովեանի սիրտը ունի, զղա- ցումի ուժգնութիւնը, դրական աւելի լայն հորիզոնով մը եւ աւելի կատարեալ տիրա- պետութեամբ մը արուեստի եւ լեզուի։

Ահարոնեան կը կրէ իր հոգւոյն խորը իր զիւղը, հայ նահապետական պարզուկ կեանքի երջանկութիւնը եւ միամտութիւնը հանդերձ իր նախնականութեամբ։ Պիտի անցնի տալու նկարագիրը հայկական դիւ- ղին, սակայն դեռ միտքը դրական է աղէտի պատկերներով. իր Խեղճերը հա- տորը 1902ին կը պարունակէ տակաւին ցըն- ցումներ այդ տալուութիւններէն։ Դա- րաւոր կադմիս, Խաւարիս լուսին պատ - մուածքներով, եւ մանաւանդ Սեւ օրեր վիպակով, ուր պատկերացուած է իրական դոյներով բովանդակ հայկական դիւղի մը փճացումը հրդեհով եւ սպանութեամբ քիւրտերու կողմէն՝ աղջկան մը, անման Մարօ-ի առեւանդումին հետեւանքով։ Կը յաջորդեն գեղարուեստական տեսակէտով աւելի կատարեալ դործերը 1903էն վերջ. անոնց առաջինն է Մրրիկի սուրբը, ուր քնարական շունչը, հոգեբանական նկարա- գրութիւնները «Ասօ»-ի անհուն ցաւին՝ որ պարտադրուած սիրոյ մը հարկէն կը տա- ուապի, կը փախչի կը մեկուսանայ բնու- թեան մէջ, կը ծածկուի ջաղացքի մը յար- կին տակ՝ ողբալու իր կորսուած սիրոյն յիշատակը, Ահարոնեանի զրջին կու տայ աւելի մեծ հմայք մը։ «Ասօ» մեռ- ցնելու համար իր ցաւը սրտին մէջ դարձած է ուխտաւորը «Մրրիկ»ի սուր- րին, միացած է զիւղին ճակատագրին վը- րայ հսկող զինեալ երիտասարդներու խում- րին, որ կը վանեն փոթորիկները, կը հա- լածեն քիւրտ հրոսախումբերը։ Ահարոնե- ան հոս զուգած է իրարու մարդկային սրտին պատմութիւնը եւ աղատագրական շարժումին ձկտումները, թերեւս քիչ մը անընտան փոթորիկներով, սակայն ամ- րողջութեան մէջ այդ թերին անդալի

կ'անցնի. ինչ որ կ'աղղէ հոն՝ նկարագրու- թեանց տուած բանաստեղծական երանդն է՝ որ կը դրաւէ ու կը յուզէ։

Ահարոնեան մայրական սիրոյ հիանալի պատկերը դժած է իր Մայրերը անման պատմութեամբով, ուր «Սուսան» կը տառա- պի սպասումով իր որդւոյն, իր հերոս «Սա- ք»-ին որ լեռներու արծիւն է, հեռացած տունէն հայրենիքի գաղափարականին հա- մար։ Սուսանի սիրտը սակայն չի փնտռեր այդ գաղափարականը, ան կ'ուզէ իր մօտը ունենալ իր արդանդին պտուղը, սիրել ու սիրուիլ։ Ի՞նչքան դեղեցիկ է նկարագրու- թիւնը այդ սպասումին, որուն Ահարոնեան տուած է այնպիսի հոգեբանական թրթռա- ցում ու թատերական շարժում՝ որ ստու- ղուի կ'աղղէ։ Սաքօ դիւցադնաբար ինկած է Գարահիսարի լեռան վրայ, աշուղներ ու զղարներ զիւղէ զիւղ եւ տունէ տուն տա- րած են այդ հերոսական անկումին սրտա- յոյզ պատմութիւնը. միայն «Սուսան» է որ չի գիտեր ու շարունակ Տիրամօր պատ- կերին առջեւ կ'աղօթէ դարձին համար՝ իր սիրելի որդւոյն։ Այդ աղօթքը ի սկզբին աղաչական, կը դառնայ ուժգին բողբոջի աղաչական, կը դառնայ ուժգին բողբոջի աղաչական, կը դառնայ խելագարութեան, մա- ճիչ, կը հասնի խելագարութեան, մա- նաւանդ երբ զղարի երգին մէջէն կը լսէ անունը Գարահիսարի զիւցաղին։ Կը փլչի շէնքը Սուսանի երազներուն, յոյսերուն. իր արտայայտութիւնը կ'անցնի բանակա- նութեան սահմանէն, անէ՛ծք ու դժո՛խք բոլոր զինքը խաբողներուն, դժոխք նաեւ իրեն. յուսախաբութիւնը կը տանի զինքը իրեն. յուսախաբութիւնը կը տանի զինքը իրեն։ «Սու- կուրութեան իր հաւատքի աչքին։ «Սու- կուրութեան իր հաւատքի աչքին, որոնց սան» կ'անձնաւորէ բոլոր մայրերը, որոնց մէջ մտքէ աւելի սիրտն է որ կը խօսի։ Ցաւը կը մօտեցնէ զինքը մահուան, որուն թելին տակ պիտի հանդէ՛ հուսի իր տա- ուապող հոգին. խաչուած Յիսուսի պատ- կերը, որուն ոտքերուն տակ սղաւոր կու կերը, որուն ոտքերուն տակ սղաւոր կու լայ Տիրամայրը, կ'ըլլայ միակ սիրտանքը ու ան կը դառնայ իր հաւատքին. «մայ- րերը կը ծնանին ու աշխարհ, մարդիկ կը տանին, կը տանին... Մեղայ Աստու-

ծոյ, կը կերկերայ ձայնը պառաւին, կը սեղմէ շրթունքներուն Աւետարանը՝ մըր- մընջելով խեղճ մայրեր, խեղճ մայրեր»։

Մոլորների տակից, Խաւարի մէջ երկու վիպակներու մէջ Ահարոնեան կը մօտենայ սրտի ուրիշ ծալքերուն, ամուսնական ան- հաւատարմութեան դժբախտ իրականու- թիւններուն, մանաւանդ երկրորդին մէջ՝ այդ ցաւին սաստկութիւնը աւելի ուժեղ չեչտ մը կ'առնէ. «Սօֆի» մը կամ «Սօնա» մը կը ներկայացնեն կնոջ թոյլ ու փոփո- խական նկարագիրը հոգեբանական խոր թափանցումով։ Անդունդը վիպակով, ուր Ահարոնեան կը դժէ մեղի պանդխտող Ա- րութին պատկերը, օտարութեան մէջ թա- ւալող մեղքի եւ կրքերու կլաիին մէջ, չի բերէր նորութիւն, սակայն անդերա- դանցելի կը մնայ իր նկարագրութիւննե- րով։

Ու այսպէս Արաքը, Կեանքի վէպը եւ դեռ ուրիշ հատորներ որ կը յաջորդեն, այս շրջանին, կու տան դանդաղ կողմերը իր տաղանդին։ Ընդհանրապէս դիւղն է իր ա- ոարկան, բայց կը թողու երբեմն դայն իջնելու համար ընդհանուր մարդկային սրտին, ինչպէս է Լաւր-իւնը դործին մէջ. հոս չենք դտներ հայ դիւղական միջավայ- րը, որ առ հասարակ խորքը կը կաղմէր իր բոլոր պատմութեանը. փոխադրու- ուած ենք օտար միջավայրի եւ օտար հո- դեբանութեան մը մէջ, բայց ոչ օտար մարդկային ընդհանուր հոգեբանութեան համար։ Այս դործը վէպ մը ըլլալէ աւելի, երկու սիրող հոգիներու պատմութիւնն է, ուր կայ սրտէ սրտ դեղումը բուռն զղա- ցումներու, առանց վերջնական լրումի, ուր կայ սիրոյ տառապանքը, յոյսը, դա- զափարականը որ յանկարծ կը սկսի եւ յանկարծ կը չքանայ, լուրթեան մէջ հիւս- ուած երա՛ղ, ու յաւիտեան դատապարտ- ուած մեռնելու լուրթեան մէջ։ Ահարոնեան հոս ալ, ինչպէս նման ուրիշ առիթներուն, կը յարուցանէ ճակատագրի հարցը, որ հո-

զիններու երջանկութիւնը կը խորտակէ, ներկայացնելով կեանքը ցաւերու անկերջ շղթայ, յուսախաբութիւն, պատրանք ու տառապանք: Այդ իր սովորական շէշան է, իր տխուր յանկերգը:

Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին Ահարոնեան հայրենիքի կենսական հարցերով մտահոգուած է եւ ամբողջ էութեամբը տարուած ազատագրելու Հայաստանը ու անցընելու դայն ազատ ու անկախ ազդերու կողքին:

Հոգեկան ինչ ուժեղ ապրում այդ օրերուն. Ահարոնեան մէկ նպատակ ունի, խանդավառել հայ ոգին, զօրացնել կամքը եւ արծարծել սէրն ու փառքը հայրենիքի վսեմ դադափարականին՝ հայ երկտասարդութեան մէջ. այդ ապրումներու ծնունդն է Հայրենիքիս համար հատորը, ուր կան ամփոփուած իր ուղերձները, իր խորհրդածութիւնները: Այդ դադափարականին զոհուած կեանք մ'է Ահարոնեանին, որ ճաշակած է բանտերու դառնութիւնը, մոռյալ դանդիւր եւ միայնութիւն՝ յոյսով յաղթական ելլելու ամէն խոչնդոտներու դէմ, հաւատացած որ սրբազան դատ մ'է հայունը, որուն առջեւ պէտք են խոնարհիլ ու յարգել իր իրաւունքը, ամէնքը ամէնքը: Իմ բանտը, Պարտուածները այդ իր անխախտ հաւատքին վկանները, եւ միանգամայն արձանագրումը իր կրածներուն ի սէր հայ ազգին: Իր ճիշդերով եւ հայ երկտասարդ կամաւորներու հերոսութեամբ՝ ստեղծուած է Մայիս 28ի պանծալի յիշատակի օրը, հայ ժողովուրդի դաւաճող ձկնորմներու յաղթանակը. Ահարոնեան զլուխ է հայ պատուիրակութեան որ կը մեկնի Պոլիս, ստորագրելու խաղաղութեան համաձայնագիրը: Ան զլուխ է դարձեալ հայ պատուիրակութեան, ստորագրելու համար Սեւրի մէջ խաղաղութեան Դաշնագիրը ուրիշ ազգերու ներկայացուցիչներուն հետ: «Կեանքիս ամենաերջանիկ օրն է այս, կը զրէ ան իր օրագրին մէջ. երեսուն տարուայ պայքարս, բողո-

քըս, տառապանքս եւ յոյսերս պատկերին փառաւոր յաջողութեամբ...»: Ստուգիւ ամէնէն երջանիկ հայն եղաւ որ նախնիքներուն երազը տեսաւ իրականացած իր անձին մէջ, բայց եղաւ միանգամայն ամէնէն դժբախտը եւ յուսախաբը երբ այդ ձեռք բերուած անկախութիւնը կարճ ատենուան կեանք մը ունեցաւ:

Ահարոնեան կ'առանձնանայ դարձեալ ինքնիր մէջ, կ'ապաւինի հայ զիւղի իր յիշատակներուն: 1926ին իր ձամբարդը երեք պատմութեանքներով, յետոյ Կարուշկը, իմ գիրքը հատորներով կը փոխադրէ՝ մեզ զիւղական կեանքին ու հոգեբանութեան մէջ, անգամ մը եւս սիրովութեամբ համար կարծես անոնցմով: Իր քաղաքական յուշերը կ'ամփոփէ Քրիստափոր Միքայէլեան, Բաֆֆի եւ Անդրանիկ զործերու մէջ:

Մեր նպատակը չէ անշուշտ կատարեալ համապատկերը տալ Ահարոնեանի բովանդակ արտադրութիւններուն, այլ համառօտ ակնարկով անցնիլ, ցոյց տալով իր ուղղութիւնը, իր նիւթերու նկարագիրը: Իր կեանքի առաջին շրջանին փորձած է նաեւ թատերական սեռը, Արցունքի հովիտը, Ուխտուածներ, Սեւ քոչուրը կամ Ոսկի հէֆեսք, Պատրանք կամ Մեռելները խօսում են կտորներով:

Երկտասարդական օրերուն կը պատկանին այնքան խանդավառ ոգւով զրի առնուած իր ճանապարհորդական ու տեղադրական յուշերը Խաղիայում, եւ Շվեյցարեան գիւղը խորագրիներու տակ, որոնց մէջ նկարագրական մեծ արտեստ դրած է: Եթէ կաթուածը չդար ու չզգեսնէր զինքը, Ահարոնեան չէր թողուր զրիչը ձեռքէն ու դեռ ինչե՛ր իր զիւղէն, ինչե՛ր իր հասուն մարդու տղաւորութիւններէն պիտի չյանձնէր թուղթի: Ասոր ապացոյց են Արագիլները (Հայրենիք, 1927. թ. 11), Ողջակեղը (անդ, 1928. թ. 6), Խաղաղական էսկիզներ (անդ 1928-29) եւն., որոնք թէեւ ոչինչ կ'աւելցնեն իր արդէն զեղարուեստական արտադրութեանց վրայ, սակայն պի-

տի ծառայէն ամբողջացնու իր յուշերը, իր կեանքի պատմութեան մանրամասնութիւնները:

Ահարոնեան միակն է մեր զրոյներուն մէջ որ ճանչցուած ու սիրուած է հայ միջավայրէն դուրս ալ, իր համբաւը առած է միջազգային ծառայ, առոր ապացոյց են Փրանսերէն, Կերմաներէն, անգլիերէն, ռուսերէն, չեխո-սլաւերէն, պուլկարերէն եւ յունարէն թարգմանութիւնները:

Յաջորդով պիտի տեսնենք իր զրակահոլութեան զեղարուեստական նկարագիրը:

(Շարունակելի)

Հ. Մ. ՃԱՆԱՇԱՆ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

Յակոբ Օշական կը վախճանի Հայէսլի մէջ՝ Փետրուար 17ի զիւշերը սրտի կաթմածէ մը, որմէ շուրջ տասը տարի է զիւր կը տառապէր:

Ծնած Պրուսա 1883ին, աղքատ ծնողաց զաւակ. ձեռք բերած է, կարելի է ըսել ամբողջութեամբ, իր մտաւորական զարգացումը՝ լոկ իր ինքնաշխատութեամբ: Զբաղած է ուսուցչութեամբ իր ծննդավայրին մէջ, յետոյ Պոլիս, եւ ամէնէն վերջն ալ Երուսաղէմ:

Բազմաթիւ են իր թողած գործերը, պատմութեանքներ, պատկերներ, քննադատական էջեր, վէպեր, վիպակներ, թատերական գործեր, որոնց բոլորին ալ ուղած է հասցնել իր շունչը, զբաղել անոնց մարմինն ու գոյութիւնն տալու մտահոգութեամբ եւ նաեւ յաւակնութեամբ՝ վերականգնելու իր դարը, իր ժամանակակիցները, ըլլալ նոյնիսկ չհասկցուած իր օրերուն, որպէսզի յաջորդ դարերը հիանան իր վրայ՝ իրեն ժամանակները կանխող մեծատաղանդ գրագէտի մը: Այսպէս ան կը մտածէր իր մասին:

Անոր վերջին կարեւոր գործերը՝ ուր

ամփոփեց իր խիղախ քննադատական տեսութիւնները՝ եղան Համապատկեր արեւմտահայ գրականութեան, եւ Հայ Գրականութիւն. անոնցմէ դատ իր կեանքի սկզբնական շրջանին տուած էր Խոնարհները, Խորհուրդներու մեհեանը, Մնացորդացը անաւարտ ու երկարապատում, Հարքէնքներու շարքը կարգ մը հայ մատենագիրներու, որոնց հարուածը իջեցուցած ատենը շատ անգամ անտեսած է ժամանակը, պահանջները անոնց ապրած դարուն կամ շրջանին: Հիմա որ արդէն բաւական ժամանակ անցած է իր մահէն, — եւ որուն արձագանդը ցարդ «Բազմալիկ» չկրցաւ տալ իր սիւնակներուն մէջ, թերթիս նախընթաց թիւն արդէն լրացած, շարուած ու տպագրուած ըլլալով մահուան բոթը առած պահերնու — անշուշտ Օշականեան քննադատութեան: Արդէն իր կենդանութեան, երկու հոսանք կողք կողքի ապրած են իր շուրջ, համակիրներու եւ հակառակորդներու, որուն յայտնի ապացոյցը տուին անոնք իր գրական քառասունակը տօնախմբելու եւ չտօնախմբելու պայքարին մէջ:

Օշական պայքարող էր, եւ խիղախ յարձակող իր քննադատի առարկան մէջ, բայց մեզի կը թուի թէ կան յայտնի չափազանցութիւններ, քմահաճոյքներ հեղինակները արժեքաւորելու մէջ, որոնց օր մը մտադիր են անդրադառնալու: Բազրա — տունի եւ Հիւրմիւղ, — որ մեր դասական շրջանի գրականութեան տիպար ներկայացուցիչներն են, հաւատարիմ իրենց արուեստին, իրենց մտայնութեան, աւելի ճիշտ դասական ճաշակին եւ ըմբռնումին, ինչպէս են բոլոր իրենց նմանները ուրիշ ազգերու մէջ, — երբ իրմէ կ'անգոսնաւին եւ իր անարժէքը կը նետուին մէկդի, ապացոյց են թէ Օշականի մէջ կը գործէ կողմնակցական ոգի, տեսակ մը անհասկացողութիւն ժամանակներու, գրական շրջաններու: Նմանապէս զարմանալի է բոլորու-